ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 279
20 հուլիսի 2022 թվականի N -Ա

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի N 243-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1644-Ա որոշումը և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1644-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1026-Ա որոշումը՝

որոշում եմ.

1. «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 102345200 (հարյուր երկու միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 43133400 (քառասուներեք միլիոն հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 59211800 (հիսունինը միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի հոկտեմբերի 5-ի N 243-Ա որոշմամբ հաստատված «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 59211800 հիսունինը միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր ՀՀ դրամ, որը կազմում է 383 (երեք հարյուր ութսուներեք) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 154600 (հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 383 (երեք հարյուր ութսուներեք) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

20.07.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. հուլիսի 20
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2022 թվականի
հուլիսի 20-ի N 279- Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Ռ. ԳՈՒԿԱՍՅԱՆ

«20» 07 2022թ.

Կազմված է 20.07.2022թ. և բաղկացած է 1 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ - - -
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 11.12. 2007թ.

Գրանցման թիվ- 222.120.00770
ՀՎՀՀ 09211641
11.12.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

« » ---------- 2022թ

«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1. «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 59211800 (հիսունինը միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է 383 (երեք հարյուր ութսուներեք) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 154600 (հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 383 (երեք հարյուր ութսուներեք) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 11.12.2007թ.) բաղկացուցիչ մասը:

ք.Կապան-2022թ